չեն կազմել։ Եւ մի քանի օրւայ բանակցութիւններից յետոյ, դեկտ. 2-ի առաւօտեան, Քեազիմ Կարաբեքիրը, վերջնագրի ձևով ներկայացրեց հետեւեալ պայմանները.

«1. Թիւրքիայի Ազգային Մեծ Ժողովը պարտաւորւում է ճանաչել Հայաստանի անկախութիւնը հետեւեալ սահմաններում.

Ախալքալաքի դաւառի հարաւային մասից Ուչ-Թափալար սարը դէպի հարաւ մինչև Բաշ-Շորագեալ, մինչև Արփաչայ—Արփաչայի հոսանքը մինչև նրա խառնւելը Արաքսի հետ, Արաքս գետի հոսանքը մինչև Արաքս կայարանը, այստեղից դէպի Մարտիրոս մինչև Զայքէնդ գիւղը։

2. Կարսի նահանգը և Սուրմալուն համարւում են վիճելի մինչև երեք տարի, որի ընթացքում Հայոց կառավարութիւնը կարող է յայտարարել հանրաքւէ որոշելու համար վերջնական բախտը այդ նահանգների։ Հանրաքւէի ժամանակ պէտք է մտնէ այնտեղ խառն հայ-թիւրքական ժանդարմէրիա։

3. Հայերը հրաժարւում են Սևրի դաշնագրից. յետ են կանչում բոլոր այն կոմիտէները և ներկայացուցիչները, որոնք դոյութիւն ունեն Եւրոպայում, չեն պահում Հայաստանում դաշնակիցների ո՛չ մի ներկայացուցիչ, մինչև որ Թիւրքիան հաշտութեան դաշն չկնքէ նրանց հետ։

4. Հայաստանը իրաւունք ունի պահելու զօրաբանակ ոչ աւելի, քան 1,500 սին և դրան համապատասխան քանակով սպաներ, նաև անհրաժեշտ քանակութեամբ ժանդարմէրիա։ Երկիրը պաշտպանելու համար կարող են լինել ամրոցներ, որոնք կարող են զինւել միայն պաշարողական ծանր թնդանօթներով։ Վերացւում է պարտադիր զօրահաւաքը։

5. Հայաստանի վրա յարձակման դէպքում Թիւրքիան պաշտպանում է Հայոց կառավարութեան պահանջմամբ և աջակցում է Հայաստանին զորքով։

6. Թիւրքիան և Հայաստանը փոխադարձաբար օգտւում են ազատ թրանզիտից, ինչպէս երկաթուղիներով, այնպէս և բոլոր ճանապարհներով։

7. Երկու կողմերն էլ չեն վճարում պատերազմական ծախսեր։

8. Պայմանները կնքելուց յետոյ սկսում են աշխատել երկաթուղիները, վերադառնում են քաղաքացիական մասի գերիները, իսկ երբ սկսւում են աշխատանքները Հայաստանի և Թիւրքիայի միջև սահմանները որոշելու, վերադառնում են բոլոր ռազմագերիները։

9. Հայաստանի կապած բոլոր պայմանները Թիւրքիայի դէմ համարւում են անվաւեր։

10. Բոլոր դաղթականները կարող են վերադառնալ իրենց տեղերը մի տարւայ ընթացքում՝ օգտւելով բոլոր քաղաքացիական իրաւունքներից, բացի այն դաղթականներից, որոնք զինւած դիմադրութիւն են ցոյց տւել իրենց կառավարութեան դէմ։

11. Հայերը Թիւրքիայում և Թիւրքերը Հայաստանում վայելում են հաւասար քաղաքացիական իրաւունքներ։

12. Դիւանագիտական, ինչպէս և հիւպատոսական յարաբերութիւնները, նոյնպէս և քաղաքացիների ազատ երթևեկութիւնը երկու երկրների միջև, սկսւում է դաշնագիրը ստորագրւելուց յետոյ, որից յետոյ վերսկսւում են փոստային և հեռագրական հաղորդակցութիւնները Թիւրքիայի և Հայաստանի միջև։